Տաթևիկ Մուրադյան
Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի (ԺՍԿ) գիտաշխատող
Գիտ. ղեկ.՝ պ. գ. թ., դոց. Մ. Գաբրիելյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՀԱՂԹԱԹՈՒՂԹ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում վերլուծել վերջին շրջանում տեղի ունեցող իրադարձությունները և թուրքական ժխտողական քաղաքականության հետևանքով միջազգային թատերաբեմում հայկական ձեռքբերումների և դարավոր հարցի մի նոր, ավելի դրական և դիվանագիտական հարթությունում գտնվելու հանգամանքը, որը պայմանավորված և հայկական կողմի պատմական փաստերի գրագետ ներկայացումով և դրանով պայմանավորված հարցի լուծմանը որքան հնարավոր է շատ պետությունների ուշադրությունը գրավելով: 20-րդ դ. վերջին տասնամյակը բեկումնային էր հայերի դեմ իրագործած ցեղասպանության հիմնախնդրին առնչվող հարցերի վերաիմաստավորման և նորովի ընկալման տեսանկյունից: Եթե 1980-ական թթ. 2-րդ կեսին կարելի էր խոսել ցեղասպանության հիմնախնդիրն իրավական դաշտ վերադարձնելու մասին, քանի որ 1990-ական թթ. նշանավորվեցին հայերի դեմ իրագործած ցեղասպանության իրավական հարթությանն առնչվող հիմնախնդիրների ակտիվ լուսաբանմամբ, ապա 3-րդ հազարամյակում հայերի դեմ իրագործած ցեղասպանության հիմնական բաղկացուցիչը դարձան իրավական հարթության հիմնահարցերը:

Ցավոք, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով երկար տարիներ հայերի դեմ իրագործած ցեղասպանության հիմնահարցերը դիտարկվում էին հիմնականում պատմական փաստերի վերլուծության լույսի ներքո, ինչը թույլ չէր տալիս բացահայտել այդ երևույթի բոլոր բաղկացուցիչների էությունը: Ստեղծված իրավիճակում գրեթե անտեսվում էր այն փաստը, որ հայերի դեմ իրագործած ցեղասպանությունը՝ պատմական փաստ լինելուց զատ, նախևառաջ ծանրագույն միջազգային հանցագործություն է: Ավելին, խեղաթյուրվում էր ոչ միայն երևույթի էությունը, այլ նաև դրան առնչվող եզրութաբանական ապարատը: Նորավանք գիտակրթական հիմնադրամի տեղեկագրերի հոդվածներից մեկում Վլադիմիր Մարգարյանը անդրադարձել է մի շատ կարևոր փաստի, որ թվում է շատ աննկատ և փոքր խնդիր է, բայց կարծում եմ այն շատ կարևոր է վերլուծության համար և նոր վերաբերմունք է ձևավորում տերմինաբանության և իմաստային առումով: Մեջբերում եմ. «Հայերի դեմ իրագործած ցեղասպանությունը մենք ցայսօր անվանում ենք Հայոց ցեղասպանություն: Այս արտահայտությունն այնքան է արմատացել հայ ազգի գիտակցության մեջ, որ գրեթե չենք նկատում, որ այն իմաստաբանորեն ավելի մոտ է ոչ թե հայերի դեմ իրագործած, այլ հայերի կողմից կատարված ցեղասպանություն արտահայտությանը: Այսպես. օրինակ՝ ռուսերենով առավել հաճախակի գործածվում էր "геноцид армян", իսկ անգլերենով Armenian genocide արտահայտությունները: Նման իմաստաբանական խառնաշփոթին վերջ դնելու համար նշված ուսումնասիրության շրջանակներում հեղինակը առաջարկում է ավանդական դարձած «Հայոց ցեղասպանություն» արտահայտության փոխարեն նախապատվություն տալ «հայերի դեմ իրագործած ցեղասպանություն» արտահայտությանը, որը գուցե և փոքր-ինչ խորթ է հայալեզու ընթերցողին, սակայն իրավաբանական տեսանկյունից առավել հստակ է արտահայտում այդ արարքի էությունը»[1]: (Կարծում եմ, որ սա հետաքրքիր մեկնաբանություն է և աշխատանքի ընթացքում փորձել եմ գլխավորապես օգտագործել այդ տերմինը:)

Իրականում, անցել է գրեթե մեկ դար, սակայն Թուրքիայի Հանրապետությունը շարունակաբար վարկաբեկվում է Հայոց ցեղասպանությունը համառորեն մերժելու համար:

2011 թ. հոկտեմբերի սկզբին Հայաստան կատարած այցի ժամանակ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին դատապարտեց Թուրքիային՝ հայտարարելով, որ 96 տարին բավականին երկար ժամանակ է, որպեսզի Անկարան հաշվի նստի իր կատարած ցեղասպանական արարքների հետ: Նա նաև սպառնաց Հայոց ցեղասպանության ժխտումը պատժելու օրենք ընդունել, եթե Թուրքիան մոտ ապագայում չճանաչի ցեղասպանությունը: Ֆրանսիայի նախագահ Սարկոզիի ողջամիտ խորհրդին հետևելու փոխարեն Թուրքիայի ղեկավարները հակադարձեցին՝ հարձակվելով նրա վրա և նախատելով նրա երկիրը: Թուրքիայի հարձակումները շարունակվեցին Ստամբուլում Ֆրանսիայի հյուպատոսարանի առջև ցույցերով, որտեղ ցուցարարները բռնել էին Ադոլֆ Հիտլերի բեղերով պատկերված Սարկոզիի դիմանկարը և Ֆրանսիայի կողմից Ալժիրյան պատերազմում կատարված հանցագործությունների ուղղությամբ արված ապստամբություններով:

[1] **Մարգարյան Վ.**, Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները. Նորավանք գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N1 (17), Երևան, 2006:

Այնուհետև Ֆրանսիայում Թուրքիայի դեսպանը հետ կանչվեց խորհրդակցությունների համար, ինչպես նաև եղան Ֆրանսիայի հետ մի շարք պայմանագրեր սառեցնելու հայտարարություններ: Ֆրանսիայի նախագահը հանգիստ ընդունեց թուրքական պոռթկումները: Փարիզ վերադառնալուն պես նա նամակ ուղարկեց նախագահ Սերժ Սարգսյանին՝ վերահաստատելով Հայաստանում իր կողմից արված հայտարարությունները. «Վստահ եղեք, որ Ֆրանսիան չի դադարեցնի իր հանձնարարությունն նույնքան ժամանակ, քանի դեռ այդ ջարդերը հարկ եղած ձևով չեն ճանաչվել իրականացնողների ժառանգների կողմից: Իմ պետական այցից նախ և առաջ մնացել է այն խորը հուզմունքի զգացումն, որն ապրեցի Ցեղասպանության հուշահամալիրի մոտ՝ 1915 թ. ապրիլի 24-ին ձեր ժողովրդի դեմ իրագործված մահավճռի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելիս»: Երբ Ֆրանսիայի նախագահը լսեց իր հայտարարությունների կապակցությամբ Թուրքիայի կատաղի արձագանքը, ասաց իր օգնականներին, որ չի զղջում «Թուրքերը միշտ ինձ ատել են, դա խնդիր չէ»: Այնուամենայնիվ, Ֆրանսիայի խորհրդարանականներից ոմանք վրդովվել էին՝ լսելով, որ վարչապետ Էրդողանը մեղադրել է նախագահ Սարկոզիին երկերեսանի լինելու համար: Նրանք Թուրքիայի ղեկավարի վիրավորական բառերը ընդունեցին հեգնական բացականչություններով Ֆրանսիայի խորհրդարանում:

Նախկին դեսպան Օմեր Էնգին Լութեմը իր մտահոգությունը հայտնեց, որ եթե Ֆրանսիան արգելի Հայոց ցեղասպանության հերքումը, ապա այլ եվրոպական երկրներ կհետևեն նրա օրինակին: Նա զգուշացրեց Թուրքիայի հանրությանը, որ Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցին իրադարձությունների նման զարգացումը կդառնա հայերի մեծ հաղթանակը: Թուրքիայի՝ մարդու իրավունքների ոլորտում ակտիվիստ Մուրադ Բելգեն, բացասաբար ընդունեց իր երկրի ղեկավարների արձագանքը: Նա խիզախորեն մեղադրեց բոլոր նրանց, ովքեր հայտարարում են, որ «Մենք թուրքերս, լավ մարդիկ ենք, մենք չենք սպանում կամ ցեղասպանություն չենք գործում»: Նման հայտարարությունները «զրպարտություն» են, նշեց Բելգեն: Մեկ այլ ականավոր թուրք մտավորական և մեկնաբան Ահմեդ Ինսելը կշտամբեց վարչապետ Էրդողանի նույն խոսքերի համար, որ նախագահ Սարկոզին պետք է նայի Ֆրանսիայի գաղութատիրական անցյալին: Ինսելին հետաքրքրում է, թե արդյո՞ք Էրդողանն իսկապես կընդուներ Հայոց ցեղասպանության փաստը, եթե Ֆրանսիան ընդունի իր սեփական պատմությունը: Եվ ի՞նչ կաներ Թուրքիան, եթե միևնույն առաջարկները հնչեին մի երկրի կողմից, ով չունի պատմության մութ էջեր: Ինսելը նկատեց, որ սա միևնույն է, ով հայտարարում էր, որ օսմանյան բոլոր արխիվները բացեն, այն, ինչ

նրա կառավարությունը արգելում է այս փաստաթղթերի տեղադրումը ինտերնետային կայքում: Ինչպես իրանցի մի դիվանագետ վերջերս նշել էր. «Հայոց ցեղասպանությունը Դամոկլյան սուր է՝ կախված Թուրքիայի գլխին: Վաղ թե ուշ, Թուրքիայի մի իմաստուն ղեկավար վերջապես կհասկանա, որ Հայոց ցեղասպանության ընդունումն ավելի շահավետ է Թուրքիայի համար, քան դրա շարունակական մերժումը»[1]:

Եթե փորձենք վերլուծել այս իրադրությունը, պետք է ասել, որ 2011 թ-ին Թուրքիայի ղեկավարները թույլ տվեցին լուրջ մարտավարական սխալ: Նրանց այնքան էր մտահոգել 2015 թ-ի Հայոց ցեղասպանության հարյուրամյակի գալիք ցունամին, որ անտեսել էին իրենց դիմագրավող ավելի անմիջական քաղաքական փոթորիկները: Հայերն արագորեն օգտվեցին Թուրքիայի բացթողումից՝ կարողանալով հասնել մի շարք հաջողությունների.

1. 2011թ-ի հունվարի 23-ին Ֆրանսիայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանության հերքումը քրեականացնող օրինագիծ, չնայած, որ փետրվարի 28–ին Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական ճանաչեց ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագիծը՝ պատճառաբանելով, որ այն հակասում է խոսքի ազատության իրավունքին: Վերջինիս վերաբերյալ թուրք հայտնի լրագրող, վերլուծաբան Մեհմետ Ալի Բիրանդը հայտարարեց, որ չպետք է կարծել, որ դատարանը նման որոշում ընդունեց՝ Թուրքիայից վախենալով և հավելեց, որ Սահմանադրական խորհրդի որոշումը «թուրք-ֆրանսիական հարաբերությունները փրկեց վերջնական վատթարացումից և մինչև 2015 թ-ը Թուրքիան «ականապատ դաշտով է գնալու» և թուրք ժողովուրդը պետք է դա հաշվի առնի[2]:

2. ԱՄՆ ներկայացուցիչների պալատն ընդունեց մի բանաձև, որը պահանջում է Թուրքիայից վերադարձնել հայկական եկեղեցիները և այլ կալվածները իրենց օրինական տերերին,

3. Իսրայելի խորհրդարանական հանձնաժողովը հանրային քննարկումներ սկսեց անցկացնել Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ

4. ԱՄՆ Դաշնային դատարանը կարող է շուտով հեռակա վճիռ կայացնել ընդդեմ Թուրքիայի Հանրապետության, որով պահանջվում է հատուցում վճարել Ցեղասպանության ժամանակ առգրավված հայկական կալվածների դիմաց: Նման վճիռը խիստ զգուշացում կլինի Թուրքիայի իշխանությունների համար առ այն, որ նրանք չեն կարող

[1] Տե՛ս http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6080
[2] Տե՛ս http://www.armtown.com/news/am/trt/20120301/211768/

շարունակել վայելել ցեղասպանության զոհերի փողերից ստացված, անարդար վաստակած գումարները[1]:

Անդրադառնալով եկեղեցիները վերադարձնելու ԱՄՆ ներկայացուցիչների պալատի բանաձևին՝ Թուրքիայի կառավարությունը և նրա մեծածախս լոբբիստական ընկերությունները լրիվ անպատրաստ էին դիմակայելու նման զգայուն մի հարցի: Նրանք մեծ փորձառություն էին ձեռք բերել Հայոց ցեղասպանության բանաձևերը ժխտելու հարցում, սակայն ոչ մի գաղափար չունեին, թե ինչպես պայքարեն այսպիսի օրինագծի դեմ, որով պահանջվում էր վերադարձնել եկեղեցիները և այլ կալվածները իրենց համապատասխան քրիստոնեական համայքներին: Չնայած, որ վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ որոշ կալվածքներ կվերադարձվեն ազգային փոքրամասնություններին: Հիշեցնեմ, որ Թուրքիայի հիմնադրամների խորհրդի որոշման համաձայն՝ վեց գերեզմանատներ վերադարձվելու են ազգային փոքրամասնություններին՝ իրենց նախկին տերերին: Ինչպես այս մասին հայտնել էր «Agos» պարբերականը, այս որոշմամբ իրական տերերին կվերադարձվեն Բեյօղլու թաղամասի հույն ուղղափառ եկեղեցին և դպրոցը, Սուրբ Հրեշտակապետ հայկական եկեղեցին, դպրոցն ու գերեզմանատունը: Հիմնադրամի խորհուրդը քննել է հինգ համայքներին պատկանող գերեզմանները վերադարձնելու մասին դիմումները և հիմնվելով 2011թ. օգոստոսին ընդունված հռչակագրի վրա, որոշում է կայացրել, քրիստոնեական ու հրեական եկեղեցիները և 1936 թ-ից բռնազավթված գույքը վերադարձնելու մասին: Ըստ այդ հրամանագրի՝ փոքրամասնություններին պետք է վերադարձվեն հիվանդանոցները, մանկատները, դպրոցները և գերեզմանոցների տարածքները:

Այնուամենայնիվ, ԱՄՆ բանաձևն ընդունվեց 43-1 հարաբերակցությամբ Պալատի արտաքին գործերի հանձնաժողովում և ամբողջ Պալատի ավելի քան երկու երրորդ ձայներով: Առաջին անգամ ԱՄՆ կոնգրեսը պաշտոնապես հայտարարեց, որ պահանջում է, որ Թուրքիան վերականգնի ցեղասպանության զոհերի իրավունքները, և ոչ թե պարզապես ճանաչի ցեղասպանությունը: Գալիք տարիներին և ամիսներին, հայերը կներկայացնեն իրենց պահանջների ամբողջական ցանկը միջազգային կազմակերպություններին, բազմաթիվ երկրների խորհրդարաններին, ինչպես նաև հենց Թուրքիայի կառավարությանը:

Վերջին նպաստավոր զարգացումը ԱՄՆ դաշնային դատարանի կողմից Թուրքիայի կառավարության դեմ երկու հայցերով հավանական հեռական վճիռ արձակելն է, որով պահանջվում է

[1] Տես http://www.armtown.com/news/am/has/20120112/4262131417

հատուցում վճարել Ցեղասպանության ժամանակ առգրավված հայկական կալվածների դիմաց: Նման վճիռը խիստ զգուշացում կլինի Թուրքիայի իշխանությունների համար առ այն, որ նրանք չեն կարող շարունակել վայելել ցեղասպանության զոհերի արյունոտ փողերից ստացված, անարդար վաստակած գումարները:

2015 թ. սպասված հայկական ցունամիից դեռևս շատ առաջ, Թուրքիան շարունակաբար բախվում է ճնշումների, որոնք առնչվում են մարդու իրավունքների նկատմամբ ավելի մեծ հարգանքի, քրդերի ինքնիշխանության, ինչպես նաև հայկական ավելի խիստ պահանջների հետ, միևնույն ժամանակ ունենալով լուրջ խնդիրներ գրեթե իր բոլոր հարևանների հետ: Ներքին և արտաքին մեծ մարտահրավերներով ծանրաբեռնված թուրքական վարչակարգը նվազ վտանգ կսպառնա թե իր բնակչությանը և թե իր հարևաններին և ավելի հավանական է, որ կլուծի անցյալի անարդարությունները և ներկայի հակամարտությունները[1]:

Թուրք գրող Էլիֆ Շաֆագը «Ստամբուլի ապօրինի զավակները» վեպի համար հավակնում է Անգլիայում գրականության ասպարեզում հեղինակավոր Orange Broadband Prize for Fictions պարգևների: Թուրքերեն թարգմանությամբ «Հայրն ու ապօրինի զավակը» կոչված վեպում թուրք-հայկական հարաբերություններին անդրադառնալու, դրանց էությունը բացատրելու, Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում թուրքերի կողմից հայերին ցեղասպանության ենթարկելու մասին բացահայտ արտահայտություններ անելու համար 301-րդ հոդվածով «թրքությունը վիրավորելու և թուրքերին ցեղասպանության մեջ մեղադրելու» հիմնավորմամբ դատական գործ է հարուցվել Էլիֆ Շաֆագի դեմ, որը հետագայում կարճվել է: Վեպում թուրք-հայկական հարաբերությունները 90-ամյա ժամանակահատվածում պարզաբանվում են Ստամբուլի և ԱՄՆ-ի միջև թուրք և հայ ընտանիքների ունեցած կապերի միջոցով[2]:

Ի հակադրություն թուրքական կառավարության արտաքին և ներքին ջանքերի, որոնք ուղղված են ամբողջ աշխարհում մերժողական քաղաքականություն և վերաբերմունք տարածել հայերի դեմ իրագործած ցեղասպանության դեմ, վերջին երկու տարում այս հարցը բարձրացվեց և մեկնաբանվեց մեկ այլ հարթակում և ավելի ազդեցիկ մեկնաբանությամբ: 2010 թ-ին Գերմանիայում ռեժիսոր Էրիկ Ֆրիդլերի կողմից նկարահանվեց փաստավավերագրական ֆիլմ՝ «Աղետ» հայերի դեմ ցեղասպանության վերաբերյալ, որտեղ մանրամասն և փաստերի հստակ առկայությամբ և յուրահատուկ

[1] Տես http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6232
[2] Տես http://hayq.blogspot.com/2008/03/blog-post_20.html

վերլուծությամբ ներկայացվեց Հայոց ցեղասպանությունը: Ինձ համար հետաքրքիրն այն է, որ գերմանացի վերլուծաբանները և քաղաքագետները հստակ ներկայացնում են իրենց մեղքը և բացասական գործողությունը այս վճռագործության իրականացման ժամանակ,անգամ ներկայացվում են այն փաստերը, որ Գերմանիան հատուկ և մտադրված քաղաքականություն է կիրառել հայերի դեմ[1]:

Մեկ այլ ազդեցիկ և փաստավավերագրական ֆիլմ էլ նկարահանվեց 2011 թ. Շվեդիայում բեյրութահայ ռեժիսոր Սուզաննե Խարդալյանի կողմից «Իմ տատիկի դաջվածքները» անվանումով, որտեղ պատմական հիշողության վերականգման միջոցով փորձ է արվում լուսաբանել այն նյութերը, որոնք փաստում են ցեղասպանության ժամանակ հայ կանանց և աղջիկների բռնաբարության և խոշտանգումների դեպքերը: Ֆիլմն այնքան ազդեցիկ է, որ բազում , դժվար ջանքերի գնով այն պետք է այս տարի ցուցադրվի Թուրքիայում ևս, որը վստահ եմ, որ հերթական անգամ մեծ աղմուկ կբարձրացնի և հերթական ժխտողական ակցիաները կանցկացվեն, որոնք այս անգամ ևս կծառայեն որպես հաղթաթուղթ, և այս ֆիլմը դեպի ամբողջ աշխարհ հաղորդագրության նման մի բան կհանդիսանա և կլուսավորի շատ մութ էջեր, և տարիներ շարունակ ստվերված փաստերը[2]:

Չպետք է մոռանալ նաև այս հարցի շուրջ ամբողջ աշխարհով մեկ ստեղծվող և օրեցօր թարմացվող տարբեր լեզուներով թարգմանված գրականության մասին, որը ևս մեծ հաղթաթուղթ է և քաղաքակիրթ, և՛ դիվանագիտական, և՛ մարդու իրավունքների օրինական պաշտպանության միջոցով մարդկության ուշադրությունը հրավիրել այս հարցի շուրջ և պահանջել արդարացի վերաբերմունք: Հատկապես պետք է նշել Ռայմոնդ Կեվորկյանի «Հայոց ցեղասպանություն» ամբողջական պատմություն աշխատանքը, որտեղ մանրամասն և իրավացի փաստարկներ են ներկայացվում ցեղասպանության իրականացման սկզբից մինչև մեր օրերը տիրող իրավիճակի վերաբերյալ և արված է շատ հետաքրքիր վերլուծություն[3]:

Ամփոփելով աշխատանքը՝ պետք է ասել, որ վերջին տարիների այս գործընթացների հաջողության ղեկը միանշանակ թեքվել է հայկական կողմը , իսկ դարերով քննարկվող այս հարցը այսօր արդեն միջազգային ավելի մեծ լսարան ունի և բողոքի ձայնը կարծես լսելի է

[1] Sti http://www.linecinema.org/newsz/dokumentalnyij-online/503046-katastrofa-genocid-aghet-ein-v246lkermord-2010.html
[2] Sti http://www.pomegranatefilmfestival.com/index.php/home/79-my-grandmas-tattoos
[3] **Kevorkian R.** , The Armenian Genocide, A Complete History, New York, 2011.

դարձել բոլորին, այն դեպքում, երբ Թուրքիան դեռ շարունակում է ժխտել անցյալում տեղի ունեցած ցեղասպանության փաստը և ամեն գնով փորձում է վերացնել դրա թողած հետևանքները, որը վաղ թե ուշ արդեն անարդյունավետ կլինի և Թուրքիան ստիպված կլինի մշակել նոր քաղաքականություն՝ դիմակայելու համար միջազգային իրավացի պահանջներին և դատապարտումներին: Միևնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ այս հաղթական իրավիճակը ստեղծվել է նաև որոշ պետությունների կողմից ստեղծված բարեկեցիկ պայմանների հաշվին: Այսինքն, իրականում կան հստակ քաղաքական խնդիրներ, որոնք ենթադրել են տալիս, որ այս փուլում Ցեղասպանության գործոնն օգտագործելը ձեռնտու է նաև գերտերություններին: Չմոռանանք, որ ԱՄՆ-ն շուտով թևակոխելու է ընտրությունների փուլ և սկսվելու է պայքարը հայկական ձայների համար: Եվ, բնականաբար, նորից կտրվեն խոստումներ հարցի վերջնական լուծման և ցեղասպանության վերջնական ճանաչման վերաբերյալ, բայց, իհարկե դժվար է կանխատեսել, թե ինչ կլինի: Հաջողությունների այս շարքին կավելանան արդյոք նոր իրադարձություններ, թե կարող է հանկարծակի տեղի ունենան փաստեր, որոնք կշրջեն պատմության ողջ ընթացքը:

Татевик Мурадян

ОТРИЦАНИЕ АРМЯНСКОГО ГЕНАЦИДА ТУРЦИЕЙ КАК ПОБЕДНАЯ КАРТА АРМЕНИИ НА МЕЖДУНАРОДНОЙ АРЕНЕ

Подводя итоги работы следует сказать, что в последние годы, управляя успеха этого процесса наклонена армянская сторона, и этот вопрос неоднократно обсуждался на протяжении веков крупной международной аудитории и голос протеста был услышан во всем мире , в то время как Турция продолжает отрицать прошлое а также тот факт геноцида на последствия пытается устранить влево, что было бы контрпродуктивно, и рано или поздно Турции придется разрабатывать новую политику, чтобы противостоять требованиям международного права. В то же время не следует забывать, что эта ситуация также победила в ряде стран, лучше учитывать условия, что в действительности есть четкие политические проблемы, которые предполагается использовать этот фактор в пользу сверхдержавы геноцида. Давайте не будем забывать, что США скоро превратится в

сцену и начнется борьба за голоса избирателей, и, конечно же, снова обещания будут даны про окончательные решения и окончательного признания геноцида, но, конечно, трудно предсказать, что произойдет и успех этой серии будут новые события, которие могут произойти внезапно, которые изменят весь ход истории.

Tatevik Muradyan

THE DENYING OF ARMENIAN GENOCIDE BY TURKEY AS A WINNING CARD FOR ARMENIA ON THE INTERNATIONAL ARENA

Summing up the work should be said, that in recent years, steering the success of this process is tilted the Armenian side and this issue has been debated for centuries a large international audience and has a voice of protest be heard in all, while Turkey continues to deny the past and the fact of genocide at the consequences of trying to eliminate the left, which would be counterproductive and sooner or later Turkey will have to develop new policies to confront the demands of the international right. At the same time should not forget that this situation was also victorious in some countries, better account of the conditions is, in reality, there are clear political problems, which are supposed to use this factor in favor of the superpowers of Genocide. Let's do not forget that the United States will soon turn into a stage and the start of the fight for votes and again promises will be given for the final solution and the final recognition of the genocide, but of course it is difficult to predict what will happen and the success of this series will be new events ,which may occur suddenly or facts that will change the whole course of history.